

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 24 » մայիսի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է հարցումների՝ որպես ուսումնական գործընթացի որակի գնահատման միջոցի, կազմակերպման սկզբունքները, ձևերը և մեթոդները:
- 1.2. Դասախոսների ուսումնական աշխատանքների /դասախոսություններ, սեմինարներ, գործնական և լաբորատոր աշխատանքներ/ գնահատումը հարցումների միջոցով ուսումնական գործընթացի որակը և արդյունավետությունը բարձրացնող միջոցառում է, որի կազմակերպումը, նախաձեռնումն ու իրականացումը կատարվում է ամբիոնների, դեկանատի, ուսումնամեթոդական վարչության, որակի կենտրոնի և ուսխորհրդի կողմից համագործակցության սկզբունքով:
- 1.3. Գնահատումը կազմակերպվում է յուրաքանչյուր ուստարում՝ դասընթացի վարման ընթացքում կամ ավարտից հետո:
- 1.4. Ուսանողական հարցումն անցկացվում է ՀՀ «Կրթության մասին» օրենքի 28 հոդվածի 4-րդ կետի պահանջների հիման վրա և համարվում է պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության որակը և արդյունավետությունը գնահատելու ուսանողների իրավունքի դրսևորում (տե՛ս հավելված 1):

- 1.5. Սույն կանոնակարգը սահմանում է նաև դասախոսի դասավանդման որակի և արդյունավետության ինքնագնահատում և գնահատում ամբիոնի կողմից կազմակերպված դասալսումների միջոցով:
- 1.6. Հարցումների արդյունքների ամփոփման թերթիկները ներառվում են դասախոսի անհատական թղթապանակում և համարվում զբաղեցրած պաշտոնին համապատասխանության չափանիշ: Մրցույթների ժամանակ հարցումների արդյունքները տրամադրվում են մրցույթային հանձնաժողովին:

2. ՀԱՐՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 2.1. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ամբիոնի նիստում հաստատվում է դասընթացների գնահատման և դասալսումների կազմակերպման գրաֆիկը, որը ներկայացվում է համապատասխան դեկանատ և ուսումնամեթոդական վարչություն: Հարցումներնը կատարվում են ամբիոնի բոլոր պրոֆեսորադասախոսական կազմի համար (ներառյալ՝ ամբիոնի վարիչը):
- 2.2. Ուսանողական հարցումները կազմակերպվում են յուրաքանչյուր կիսամյակ՝ քննաշրջանից հետո՝ ըստ ուսումնամեթոդական վարչության կողմից կազմված գրաֆիկի:
- 2.3. Ուսանողների հարցումները կազմակերպվում են ռեկտորի հրամանով հաստատված հանձնաժողովների կողմից: Հանձնաժողովում ընդգրկվում են ամբիոնի (ամբիոնների), դեկանատի, ուսումնամեթոդական վարչության, որակի ապահովման կենտրոնի ու ուսանողական խորհրդի ներկայացուցիչները:

3. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 3.1. Պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման արդյունքները որպես կանոն պահպանվում են համապատասխան ամբիոններում, իսկ ուսանողական հարցումների արդյունքները նաև ուսումնամեթոդական տվյալ վարչությունում՝ ըստ սահմանված ժամկետների:
- 3.2. Հարցումների արդյունքները դասախոսի աշխատանքային պլանի հետ միասին օգտագործվում են դասախոսի տարեկան աշխատանքների ընդհանուր գնահատման գործընթացում:
- 3.3. Հարցումների արդյունքներն օգտագործվում են հավակնորդի՝ պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում: